

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12... 3ր.
Վեցամսեայ 6

ԱՐՏԱՍԱՀԱՆՆ

Երկու քիւ մէկ ծառայ
Տարեկան 14 3ր.


Վեցամսեայ 7

ԱՍԵՐԻՍ

Տարեկան 2.60 Տօյար
Վեցամսեայ 1.50

4 Ա. Ն. Ե. Ի. Կ.

Ծանոցման տողը
20 ամսիս



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՊԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱՐՔԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rédaction du our ai

«Le voun»

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравунк

ВАРНА

Գրութիւնք եւ լեզու
տրուիր

ԱՆԴՐԱՆԻԿԻ ԽՈՒՍՐԸ

4. Պոլիս, 9 Մարտ

Սատուն գաւառին կայսրութիւնը
գեռ. անփոփոխ կը մնայ: Հայ
խմբապետ Անդրանիկ չը յօժարիր
բանակցութեան մէջ մտնել ոչ
որի հետ և չի համաձայնիր ոչ
անձնատուր ըլլալով իր խում-
բը ցրուել, ոչ ալ ձգել որ փա-
խստականները անցնին երթան
ուզած տեղերնին: Այս նկատ-
մամբ կարեւոր է սպասել մի-
ջամտութեան արդիւնքին Մուշի
Առաջնորդին, որուն սակայն,
հաղիւ թէ նախորդ օր զրկուե-
ցան գրաւոր հրահանգներ՝ իր
լիազօրութեան սահմանն որոշող
այս գործին մէջ:

Հայաստանի գործերուն անա-
պահով վիճակը շատ կ'զբաղեցնէ
այն գիւտնադիտական շրջանակ-
ները, որոնք ըլլայ աւանդու-
թեամբ, ըլլայ գրացնութեան
պատճառաւ, կը շահագրգռուին
հայկական գործերով: Անդրիա-
կան գեւապանը պարագային յար-
մար խորհուրդներ տուաւ Դրան-
Ռուս և Ֆրանսական գեւապաններն
ալ անշուշտ անոր օրինակին հե-
տեւեցան: Դուռը կը հաւատէ
որ, զինուորային և քաղաքական
իշխանութեանց պատուէր տուած
է որ, առ այժմ բանի մը չձեռ-
նարկեն Անդրանիկի գէտ, և ա-
մեն ջանք ի գործ դնեն արդի-
ւելու ու է յարձակում կամ բռ-
նութիւն Բիւրսերու կողմանէ:

Աժան Պիլիպար

ՀՈՒՆԱՆԻ ԿԱՏՈՐԱԾԸ

ՄՈՒՇ 28 փետր. 903

Հունան գիւղը՝ որ նորչէնէն
մէկ ու կէս ժամ հեռու կը գտու-
նուի, բոլորովին կործանած է
հետեւեալ պայմաններու տակ:
Փետրուար 5 ին ռուրթ օր,
15 ոստիկաններ վերստին նորչէն
կուգային, գաշտի գիւղերուն
մէջ հարկահաւաքութեան պատյ-

տէ մը յետոյ: Անոնք Հունանի
մէջ կանգ առին և չոն իմացան
թէ կասկածելի ընթացքի տէր
երեք օտարական անձեր գիւղին
մէջ տուն մը մտած են: Անոն-
ք չապէս ոստիկանները սաստիկ հրա-
յանաձգութեան մը սկսեցին
այն տունը գէտ և օդնութիւն
ուզեցին նորչէնի պահականոցէն
և Մուշի կառավարութենէն:

Պաշտօնականները փոխադարձե-
ցին և գրեթէ ուրիշ յարձակու-
ներ կրակ ըրին ոստիկաններուն
դէմ, որոնք այս կերպով երկու
կրակի մէջ բռնուեցան: այն ա-
տեն ինքիւնքին ազատելու հա-
մար պահուեցան գիւղին տունե-
րուն մէջ կամ փոսերու մէջ ո-
րոնք ձեւացած են գետակէն որ
գիւղին մօտէն կանցնի:

Նորչէնի պահուորդներու մէկ
ջակառը որ անոնց օդնութեան
կուգար, երկու վիրաւոր ունե-
ցաւ և ալ չը համարձակեցաւ
յառաջանալ:

Գիւղը վրայ հասնելուն կառ-
կածելի օտարականները, որոնց
թիւը կը կարծուի թէ վեցէ ա-
ւելի չէր, սարսափէն օգուտ քա-
ղցին լեռը փախչելու համար,
ոստիկաններու ձիերը հեծնալով
Հունանի ահաբեկած բնակիչները
ևս սկսեցին փախչիլ հակառակ
ձիւնին շատութեան և ցուրտին
սաստիկութեանը:

Դէպքին լուրը չուշացաւ տա-
րածուիլ մինչեւ Մուշ: Հայերը
անմիջապէս իրենց խանութները
զոցեցին և տուններնին մտան:
Բայց Բիւրս եւ Թուրք խուժանը
որ երկար ժամանակէ իվեր կը
պատրաստուէր Հայոց վրայ յար-
ձակելու, սկսաւ բազմութեամբ
դէպի Հունան վազել որ շուտով
մը անոնցմով լեցուեցաւ: Բիւր-
սերը եւ Թուրքերը տունները
մտան կողոպտելու, կործանելու,
բռնաբարելու և սպաննելու ի-
րենց դէմ հանդիպողները: Բու-
լոս արժէքաւոր իրեղէնները ա-
ռին, կարասիքը կոտորեցին
և պաշարները առին տարին:
Ոճրագործներուն և աւարառու-
նեան մէջ էն վայրագն է
Արապ Ապտուլլահը, որուն քով
պէտք է յիշել Սէլիմ, Մաթօ,

Չաթօ, Հաճի Վալօ և իր որդին,
Սաէտտին, Հազմէրտին, Շա-
քիր, Ալի, Թուստ Բիւլիկ աղա,
Միւշի, Տուրուս, Սպաննու-
թիւնները գործուեցան անգ-
թութեան ամենախուրք եղանա-
կաւ շատ Հայերու գլուխները փշ-
րուեցան սանդի մէջ ծեծուածի
պէս:

Գալով կիւնքուն, ասոնք բռ-
նաբարութեան աւելի վայրենի
վրէժխնդրութեամբ քան թէ
կըքով և առանց տարիքի նկատա
ռութեան, ինչպէս որ կը հաս-
տատէ զոհերէ ունեց մէկ ան-
կատար ցուցակը:

1. Լուսիկ, ձիւնոյի կիւնք
 2. Զինօ, ձիւնոյի կիւնք 40 տա-
րեկան:
 3. Խումալ, Խաչիկի աղջիկը
15 տարեկան
 4. Տիւրմէ, Մարտի կիւնք 65
տարեկան
 5. Լուսիկ, Տօմէի աղջիկը
8 տարեկան
 6. Սանալ, Գրիգորի կիւնք
 7. Կիւլիպէ, Գրիգորի հար-
սը, 20 տարեկան
 8. Ֆինոս, Խաչի կիւնք 90
տարեկան
 9. Մարիամ, Ֆինոսի հարսը
20 տարեկան
 10. Հօռն, Սագօի կիւնք,
18 տարեկան
 11. Սարէ, Մկրտի կիւնք 50
տարեկան
 12. Յալօ, Խաչապարի կիւնք
35 տարեկան
 13. Հօռն, Եֆօի կիւնք 45
տարեկան
 14. Պայազ, Ալօի կիւնք 50
տարեկան
 15. Կիւլօ, Օհանի հարսը 19
տարեկան
 16. Եղիկ, Աւտալի կիւնք 55
տարեկան
 17. Մարիամ, Աւտալի հարսը
20 տարեկան
 18. Ասպիկ, Գրիգորի կիւնք
35 տարեկան
 19. Մարիամ, Բիւթիկի կի-
նք
 20. Լուսիմ, Մէլիքի կիւնք,
20 տարեկան
- Շտապով փախուստի միջոցին
ծնողները ձգած էին իրենց մա-

նուկներու դիակները որոնք սա-
ռած գտնուեցան, ի մէջ այլոց
Աղբութ, Խաչիկի աղջիկը 3
խուման, Իւկօի աղջիկը 3 տա-
րեկան, Գորգէն Գրիգորի աղջի-
կը եւ այլն եւ այլն

Դէռ չը գիտցուիր զոհերու
ամբողջ թիւը:

Բիւրս և Թուրք տարրին ըս-
պառնալիքը կը կրկնապատկուին
և սովորականին նման կառավա-
րութիւնը ընել կուտայ կամ կը
գրգռէ: Մուշի Առաջնորդը և
Բալ. եւ Կրօն. Ժողովներու ան-
դամները նոյն թիւին հեռագիր
մը զրկած էին Սուլթանին վտան-
գը ասոր մատնանշելու համար:
Բաղէշի գաղտնական պաշտօնե-
թիւնները հրաման տուեցան են
զանոնք գաղտնի ենթարկելու իբր
զրպարտիչ և չարամիտ նպատա-
կաւ մը շարժողներ:

Յաւելուած թիւ 81
Բրօ Արմէնիայի

ԴՈՒՌԸ ԵՒ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

Սուլթանի կառավարութիւնը
Ռուսիոյ զբաղած վիճակէն օգ-
տուիլ ուզելով, կարծուածէն ա-
ւելի ընդգիւծութիւն ցոյց տու-
աւ Մակեդոնիոյ ոստիկանական
նոր կազմակերպութեան մասին:
Աւստրիոյ և Ռուսիոյ գեւապան-
ները պահանջած էինք որ Մա-
կեդոնիոյ ընդհանուր ոստիկա-
նապետ կարգուած զօրավար Տէ-
ճօրճիս իրաւունք ունենայ, Բ.
Դունէն բոլորովին անկախ կեր-
պով, իր ստորադաս պաշտօնե-
անքը անուանելու և պաշտօնանկ
ընելու: Նաեւ գեւապանները ծը-
րագիր մը գծած և որոշած էին
60 օտարազգատակ սպաներ և 30
ենթասպաներ պաշտօնի կոչել եւ
անոնց յանձնել Մակեդոնիոյ
շրջանակներուն ոստիկանապե-
տութեան պաշտօնները: Դուռը
այս երկու պահանջները Սուլթա-
նին վհապետական իրաւանց
դէմ գտաւ և կերպով մը մերժեց
իր երկրին ոստիկանական իշ-
խանութիւնը ուղղակի օտարա-
հապատակ սպաներու յանձնելու

«Ներայնսնէր ,
«Աստուղջ շորս ժամէ ի վեր այս օրսպարաքը մեզ
զգարցուց . բայց ուրիշս եմ որ վերջնական որոշ-
ումներու սակ առնուեցաւ եւ մասամբ ալ լուծ-
ուեցաւ : Կը մնայ արարաբայ կարգի խնդիր որչա՛ս ա-
յս օրս նարկ կը դատուի կիսն , Ժողովի ու չարեւիթեանը
յանձնի» . . . հեռագիր մը ստացած եմ Նրուսաղէ մէջ»

ընտրության յանձնարարութեան : Ասոր վրայ Պատրիարքը վառնայի տէր Սարգիս քահանային հեռագրած է որ Սուլթան երթայ, տեղւոյն ազգայինները հոգեւորապէս մխիթարելու շտապ տեսով մինչեւ որ Զատիկական տօները անցնին :

ՄԱՐՍԷՅԻ Ֆրանսական լուսին բարձրագոյն դասարանի ուսուցչական անդամ Պ. Վալան փորձագետն էր — որդի Տ. Մկրտիչ փորձագետին — : Ֆրանսերէն գողտրիկ ստանաւոր բանաստեղծութիւն մը յօրինելով կարգադրած է թատերաբեմէն, բարեգոծական ներկայացման մը առթիւ : Ինչպէս հանգիստականները հայ պատանիի մը յօրինած ու արտասանած այդ ստանաւորին նկատմամբ իրենց սքանչելիցումը յայտնած են, և ֆրանսական աւստիւթ մը այդ ստանաւորը իրենց գրական ընտիր կտոր մը հրատարակած է :

Մեր անկեղծ խնդակցութիւնը կը յայտնենք մեր յարգելի պաշտօնակցին Տ. Մկրտիչ փորձագետին, և կը շնորհաւորենք իր համակրելի որդին, Պ. Վալանիկը :

Ֆիւլիպիէ մեզ կը գրեն, «Այս ձմեռնային շրջանին մէջ Տիար Պէնյեանի խումբը իր զաւեշտական ներկայացումներով բաւական զբօսցուց իր ամեն ազգէ այցելուները : Գոյնի մը բարոյակից տրամներով տուտու, որոնց մէջ յաջողապէս կատարեցին իրենց դերերը Տ. Տ. Պէնյեան և Հայկ-Արամ, առաջինը ցոյց տալով թէ ոչ միայն ճարտար գոյն մը, այլ և յաջող թատերադրակ մըն է : Այս երեկոյ իրենց վերջին ներկայացումը տալով ասկէ կը մեկնին գէպի Պուրկազ-Վառնա» :

«Այսօր Մագնետաններու կուսակցութեան պատկանողները, գաղանային կիւքով մը համակուած յարձակեցան ծերունի Եղիա փորձագետին վրայ ու ծեծեցին... մինչեւ որ մահով վրձնակ Իր ունեցաւ խեղճ մարդը : Կենդի վարդապետը վատարար ոտով կանուխան գիմեց ու իր կուսակցութիւնը պաշտպանելու խնդիրը կրկնեց...»

«Այսօր Կրօնական պատկանողները, գաղանային կիւքով մը համակուած յարձակեցան ծերունի Եղիա փորձագետին վրայ ու ծեծեցին... մինչեւ որ մահով վրձնակ Իր ունեցաւ խեղճ մարդը : Կենդի վարդապետը վատարար ոտով կանուխան գիմեց ու իր կուսակցութիւնը պաշտպանելու խնդիրը կրկնեց...»

Այս կտորով, բայց տրամաբանական յայտնութիւնը միաձայն հաւանուելով համար յաջորդ ժողովին Օրակարգը նկատուեցաւ :

ՈՒՐՈՒԱԿԱՆ

ՎԱՍԻՆՅՈՒ Մալեան-Սուքիասեան հին թաղականութեան խորհրդարան թողած հաշուեցուցակին մէջ կը տեսնուի 1118 ֆր. 35 սատթիմ գումար մը «Իպահ» արձանագրուած : Նոյն թաղ. խորհրդոյ տնտեսական մէջ միեւնոյն գումարը արձանագրուած է «քարտաշարին յանձնուած» : Այդ, հետագայի պահանք է իմանալ թէ այդ գումարը ո՞ւր պահուած է, և կամ ո՞յն ատենուան քարտաշարը որո՞ւ յանձնած է զայն :

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

ԵԱԼՈՒԻ մէջ Ռուս ձաթնացի գործ միջեւ ընդհարում մը եղած և 1800 ձաթնացիներ գերի առնուած ըլլալու լուրը պաշտօնակցս չէ հաստատուած և, եթէ ոչ — նկարելի, գէթ անհաւանական կը թուի հոս, կըսէ Բիթերգոյրկէն Թաւի տրուած հեռագիր մը, աւելցնելով թէ կիսէ այդ լուրը ճիշդ ըլլալը ծովակալ Սէյֆալէյի տեղեկագրերէն ունի : Սէյֆալէյի բռնէր : Մինչդեռ ծովակալին վերջին հեռագիրը կրկնեց. միայն թէ քանի մը ճարտարական մարտնչուեր Բօրթ Արթուրի գէմը հեռուէն տեսնուած և անյայտացած են :

Շատ մը Սերպեր գիմած են Պէլկրատի կառավարութեան ու փախաք յայտնած կամուոր կրթաւոր Ռուսոյ օգնելու համար : Սերպերոյ արտաքին գործոց նախարարը պաշտօնական ղեկավար մը այդ առաջարկը ներկայացուցած է Պէլկրատի ուսուցչականին : Բայց պատասխան տուած է թէ Չարը որոշած է միայն 500 սերպ և 500 պուլկար կամուորներ ընդունել : Այդ չափ կամուորներ կը պատրաստուին ի մասոյ ճամբայ կրկնելու :

Ռուս վերաւոր զինուորներուն ինպատ Բարիզի մամուլը ներկայացուցիչներուն բացած հանգանակութեան արդիւնքը հասած է 447,759 ֆրանքի :

Օտէսայի մէջ 100 ուսանողներ ձերբակալուած են, իրենց գէպի կառավարութիւնը ցոյց տուած թշնամական ընթացքին պատճառաւ :

Սերպ կառավարութիւնը նոր փոխադրութեան մը ղեկավար չի պարտաւորուելու համար, Սերպիչիսային առաջարկած էր սուրբերուն վրայ 40 010 յաւելում մը (!) ընել : Սերպիչիսային յետ վիճաբանութեանց կառավարութեան այդ առաջարկութիւնը ընդունենք :

Քօրէյայի վերին զեկավարութիւնը ձաթնացուց ձեռքը անցնելի վեր, կրկին ուստաէր անձնաւորութիւններուն ղեկը ոչ թէ միայն խառնուած, այլ նաեւ իրենց գէմ այսօր խոստ հալածանք սկսած է : Շատեր բանաւարկուած և շատեր ալ հակողութեան տակ առնուած են : մեր նախորդ թիւով արդէն հաղորդեցինք թէ այդ բանաւարկեալներէն 40ը երեք գիշերուան մէջ զլխատուած են : Սէյֆալէյի լուր կը տրուի թէ՛ ուստաէր ճանչցուած Քօրէյայի քօրավար Նէ-Հաք և կայսեր սենեկավարներէն մին Ս. մերիկէն զուգահեռաբար արտատանելով Սինա Արաի շոգեհաւով Մարտ 18ին 25-Յու փախած են :

Նոյնպէս Մանչուրիոյ մէջ գնդապետ ճարտարներ կարծուած տեղացիներու կիսնքը հաւատարմապէս փախապի տակ է :

Ս. ԲԵՆԵՐՍՊՈՒՐԿ 14 Մարտ

— Բոլոր բարձրագոյն վարժարաններու մէջ գումարուածներ տեղի ունեցան «Հայրենասիրական» ցոյցներուն գէմ բողոքներու շարժումով : Հանքերու վարժարանին գումարուած և օրակարգը կրնայ գաղափար մը տալ «բողոքարկուներուն» ընդհանուր ոգոյն :

21 ի դէմ 215 ձաթնով, հետեւեալ օրակարգը քուէարկուեցաւ :

«Սերպիստեւ արդի պատկերազմը հետեւեալութիւն է քաղաքականութեան մը՝ հիմնուած դոյզն փոքրամասնութեան մը առանձնաշնորհումներուն վրայ, ի վնաս ուսուցողութեան մեծամասնութեան և արդիւնք այն արկածախնդր ոգոյն, որ կը յատկանշէ կառավարական ձեռնարկութիւններն Մայրաքաղաք Արեւելքի մէջ : Հանքերու վարժարանին ուսանողները ինքապաշտօնական ուր յայտնաբերուելու կը պարտաւորէ մոլորուելին շարունակ ծառայելու ոչ ոչ թէ խուսմը մը շարադրածողներու օգտին, կը յայտնեն իրենց սաստիկ դժբախտ ընդդէմ կառավարութեան, իր յանցապարտ շարժումով ժողովուրդին այն նոր դժբախտութեան, ու բացարձակապէս կը դատապարտեն վարժարանական երբեք առաջնութեան այն մասը որ իր սուս հայրենասիրական ցոյցներով և հաւատարմ ղապաղաւորման ուղեւորներով արդի պատկերազմը շային իւր գէմ, մոլորուելը պատրաստուելու համար ինչպէս ամառը պատկերազմը մը, որուն ձեռնարկուած է հակառակ նորա շահերուն : »

Ինչպէ՛ք արքանակները լուր կը ստանան որ այս բողոքներուն գէմը իրենց կը շնորհակալ են : Սուս է : Միայն ինչպէ՛ք մէջէն որ քանի մը չիտաներ անհունեցան քրիստոնեաներու ստուար մեծամասնութեան մը մէջ :

ԵՐՈՍԻԵՆ

ԻՍՏԵՐԱՍԷՐՆԵՐՈՒՆ

Վառնայի թատերասէր հայ հասարակութեան կուչտ գոհանակութիւն մը պատճառելու խորին հաւատարմով մընէ որ կը փութած հիմնական ծանուցանել թէ՛ յառաջիկայ դասական աներուն առթիւ, Պապական թատերասէրները որուն ներկայացումն իր այնքան փայլուն ընդունելութեան մը արժանացան Ռուստուքի մէջ, քաղաքս պիտի դառնայ և բոլորովին նոր և ճիշդ ընթացքով մը զոհաբերու պիտի տայ մեր ամենէն պահանջաւ թատերասէրներուն :

Սաէտիէնի սրահը այդ խուսմին օրամագրութեան տակ է թէ՛ զատկական տոներու միջոցին տեղի ունենալիք ներկայացումն և թէ անկից ետք մինչեւ ամառուան սեզոնին սկզբնաւորութիւնը :

Ի սրբեմ յուսով որ այդ նախաժտա խուսմին համակրները ուրախութեամբ պիտի ընդունին այս լուրը և անհամբեր պիտի սպասեն զաւտեան Պապական հայ խումբին զերասաններուն, որոնք ապահովապէս նորանոր ծախիւր և համակրական աղաղակներ պիտի խլեն :

ՏԻՒՐԱՆ ԹԻՒՖԵՆԿԱՆԱՆ



ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱՐՈՒԹԵՂՆ

... խմբագիր :

Պետրոս Գալթեան թող չուրանայ իր հրապարակաւ ու շատ մը չէզոք անձերու առջեւ յայտարարելը, երբ Պ. Խ. ին հետ վիճաբանութիւն կընէր անցեալ ամառ Սիւնուրէ ճաշարանին մէջ թէ «Վեր- Հիսկեաններէ ալ որ Պուլկարիա (Ռուստուք) և Ռուսոյ ոտք կոխէ պիտի զարնենք» : Ասոր շատ վկաններ ունի, ու երբ պահանջուի այն ատեն պատրաստ եմ ու եմ ամենէն ալ վկայելու իր այս արտասանած եղբայրասպան հրէջի խօսքերը :

Կրկին կըսեմ, թող չի մոռնայ որ ինքը ամէն տղէտ հայ դատաւորները կը համալէր որ հրաժարին ու և կուսակցութեան մը անդամ ըլլալէ : Իսկ ինք հայ բանուորին, հայ տղէտ գոծաւորներուն վերջին ոտնգիւրքաշէլ կուգէր որ Ռուսիա նիւլիստներուն կերպնէ : Բախանակ դարերէ ի վեր կաշկանդուած Հայաստանը թշնամիին ձեռքէն աղտոնել աշխատելու :

ԳԱՆՈՒՍՏ

ԾԱՌՈՒ ԳԻՐԳԵՐ

ԹԻՒՐԱՆՍ Ա. հատոր (162 էջ) 1 ֆր. Բ. « [433 էջ] 2 ֆր. ԶՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄԻՍՈՒՆԶ ՀԱՅԿԱՎԱՆ ԵՐԿՐՈՂ անգամ ապագրուած և ճիշտացած. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկարներու նիստ ու կացը ու թուրքերէ կրած տառապանքը անոնց ազատութիւնէն առաջ : Գին 50 սանյիմ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ԶՈՐԵՐ Պատկեր մը ճաճ հայաստանի իրական կեանքէն : Զեղչեալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել ՎՍՈՒՆ. «Իրաւունք» ի խմբագրութեան

ՊՈՒԿԻՆՇ Տ. Օննիկ Փափագեանի և Տ. Յ. Պապեանի ԳՕՆՍԹԱՆՍ. Տ. Սիւսիկ Մէլքեանի ԳԱՂԻՐԷ Տ. Կարապետ Էրզնկացեանի ԱՂԻՍԵՆԻՐԻՍ. Տ. Սահման Մաղ. մանեանի

ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Ֆրանկ-Լանի

ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Արամիսի ԳՐՕՎԻՏԷՆՍ Տ. Մ. Տէր Պողոսեան ԶԻՉՊՈՒՐԿ Տ. Կ. Մարտիկեանի

ԿՐԻՆԻՐ ԱՄԷՆ ԸՆՏԱՆԻՔԻ

Զգեստներն ու ներկող և կողմեր ու արտաներ մաքրող Տ. Տ. Վ. Սիւնուրի և իւր Բէթթօֆի ծանօթ գործարանին Վառնայի մասնաճիւղը կը փոխուի Չար-Պօլիս փողոցը նախկին չաքարատան տեղը :

Շոգիով կը ներկէ և զեղերով կը մաքրէ մետաքսէ թիւնոցներ, կիսամետաքսեղէն, բրդեղէն, կամ բանապակեալ կերպաներ, արանց կանանց և տղայոց հագուստներ, ձեռնոցներ, վերաբեկներ, պուշուր, անձրեւանոցներ, բրդէ բանապակէ մանածներ, դերձան, շայնագ և վարագոյր, ծածկոցներ եւայլն :

Ուրիշ տեղերէ թող զրկեն մեզ և մենք գործադրելով կը վերադարձնենք Նոյն խանութին մէջ կը ծախուին հիւսուած ապրանքներ, ինչպէս դուլպաններ, ֆանէլա, թիւթօ, հալիու եւն : Նաեւ ընտիր հոտեղէն, օղիոյն : Ներկայացուցիչ Ն. ՆԵՏԷՐՈՎ

